



# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 13/20234

«10 օգ 2015 թ.

Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող՝  
տիկին Սիլվա Այվազյանին

## Հարգելի տիկին Այվազյան.

Ի պատճախան Զեր՝ 15.04.2015թ. №ՕԿ-15/07 և №ՕԿ-15/08 գրությունների, կապված մայրաքաղաքում գարնանային էտումների հետ, տեղեկացնում եմ, որ հաշվի առնելով Օրհուսի համաձայնագիրը և հանրությանն իրազեկելու պարտավորությունը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից գարնանային էտումների ժամանակ մշտապես ԶԼՄ-ներով ներկայացվել են հարցի վերաբերյալ նյութեր և տվյալ ոլորտի մասնագետների կարծիքներ և հարցազրույցներ:

1. [https://www.youtube.com/watch?v=duKM8MTwYxc&hc\\_location=ufi](https://www.youtube.com/watch?v=duKM8MTwYxc&hc_location=ufi)
2. [https://www.youtube.com/watch?v=NSOAgfm5LU8&feature=youtu.be&hc\\_location=ufi](https://www.youtube.com/watch?v=NSOAgfm5LU8&feature=youtu.be&hc_location=ufi)

Խնդրում ենք, վերը նշված տեսանյութերը տեղադրել Զեր կայքում:

Զեր՝ 15.04.2015թ. №ՕԿ-15/07 գրության մեջ նշում ենք, որ Երևան քաղաքի փողոցներում կանաչ զանգվածը մասսայաբար ոչնչանում է, մինչդեռ Երևան քաղաքում ընթացել են միայն ծառերի խորը էտի աշխատանքները, որոնց ենթարկվել են միայն 40-50 տարեկան, միջատներով վարակված թեղի ծառատեսակները։ Թեղիների խորը էտի նպաստում է առողջ սաղարթի կազմավորմանը, լուսաթափանցելիության և օդարափանցելիության ապահովմանը։

Տեղեկացնում եմ, նաև, որ նշված միջոցառումը հանդիսանում է հիվանդությունների և վնասատուների /ոսկեփոր, թեղու տերևակեր, հոլանդական հիվանդության և այլ/ դեմ պայքարի մեխանիկական և առաջմ միակ արդյունավետ միջոցը, քանի որ վերջին 3 տարիների փորձը ցույց տվեց, որ ինսեկտիցիդներով պայքարն արդյունավետ չէ։

Ինչ վերաբերվում է ծառերի ֆունկցիայի ապահովմանը, այսինքն կանաչ զանգվածի ֆոտոսինթեզ իրականացնելու գործընթացին, ապա տեղեկացնում եմ, որ մեր դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում, պարզվել է, որ Երևան քաղաքի մասսայաբար վարակված թեղիների կանաչ զանգվածի 60 տոկոսը ոչնչանում է թեղու տերեակերի առաջին սերնդի առաջանալուց հետո՝ մայիս և հունիս ամիսներին: Իսկ սեզոնի ավարտին ծառերի կանաչ զանգվածը վնասատուի կողմից ոչնչացվում է ամբողջությամբ:

Անդրադառնալով մասնագետների մեկնարանություններին, տեղեկացնում եմ, որ թեղիներն արագ են վերականգնում իրենց սաղարթը, ինչպես օրինակ՝ 2014 թվականին Թումանյան փողոցում խորը էտի ենթակված ծառերը 2015 թվականին կազմավորել են ամբողջությամբ ձևավորված սաղարթ:

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրեն՝ Ժ. Վարդանյանի հարցազրույցում տրվել է մասնագիտական կարծիք Երևանում ընթացող խորը էտումների վերաբերյալ, որտեղ նշվում է, որ մայրաքաղաքում էտումներն իրականացվում են պատշաճ ձևով:  
Բուսաբաններ Գ. Օզանեզովայի և Է. Գաբրիելյանի առաջարկությունը ծառերի վերափոխման վերաբերյալ միշտ էլ եղել է արդիական և քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում, նման եղանակով 2010 թվականին վերափոխվել են Զաքիյան և Խորենացի փողոցների ծառերը: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջացել մշակել ծառերի վերափոխման ծրագիր, որում ներգրավված կլինեն Հայաստանի լավագույն մասնագետները և անհրաժեշտություն կլինի ծրագրի մեկնարկից առաջ հանրությանը գրագետ ներկայացնել ծրագրի նպատակն ու նշանակությունը:

Ինչ վերաբերվում է այլ ծառատեսակների խորը էտին, ինչպես Դուք եք նշել Զեր գրության մեջ, հայտնում եմ, որ երբեմն հարկ է լինում իրականացնել վլարային բարդիների երիտասարդացում /կարճացում/՝ ծառի տապալումը կանխելու և շրջակայթի անվտանգությունն ապահովելու համար:

«Թոշնասելների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Սիլվա Աղամյանի մեկնաբանության վերաբերյալ հայտնում ենք, որ վերը նշված վնասատուով վարակի բռնկումներն այնքան հաճախ են տեղի ունենում ամռան ընթացքում, որ կենսաբանական պայքարն այս պարագայում արդյունավետ չի լինում:

Ինչ վերաբերում կենսաբան Արսեն Գասպարյանի մեկնաբանություններին, ապա տեղեկացնում եմ, որ վերջինիս կողմից նշված Եվրոպական երկրներում վաղուց չկան 50-ամյա հիվանդ թեղիներ, իսկ համացանցից հայտնաբերված Վաշինգտոնի բնական ռեսուրսների բաժնի քաղաքականությունը կիրառելի է միայն այլ ծառատեսակների նկատմամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Արսեն Գասպարյանի կողմից համացանցում և սոց. կայքերում արված բազմաթիվ գրառումները, որոնց բովանդակության մեջ գերակշռում են վիրավորական արտահայտություններ և քաղաքական հայացքներ, չենք կարող տվյալ անձնավորության կարծիքը համարել անկախ և օբյեկտիվ:


Անդրադառնալով Զեր՝ 15.04.2015թ. №ԵՕԿ-15/08 գրությանը, տեղեկատվության տրամադրման վերաբերյալ, հայտնում եմ հետևյալը՝

- Երևանի քաղաքապետարանը և Երևան քաղաքի 12 վարչական շրջանների կանաչապատման ձեռնարկությունները առաջնորդվում են հետևյալ ուղեցույցներով՝
  1. А. А. Лаптев, Б.А. Глазачев, А. С. Маяк «Справочник работника зеленого строительства»;
  2. Вакуленко В. В., Труевцева М. Ф., “Декоративное садоводство”,
  3. Калюжная Н.С., Горбачева О.В., Дидаик Л.К. Ильмовый листоед *Galerucella luteola* Müll. (Coleoptera. Crysomelidae) как вредитель зеленых насаждений на юге Ергеней (Калмыкия) // Энтомол. обоз. – 1995.,
  4. Ինչպես նաև հաշվի է առնվում տվյալ ոլորտում աշխատող գյուղատնտեսների մասնագիտական գիտելիքները և երկարամյա փորձը:
- Երևան քաղաքի գարնանային էտումների համար ծախսերն իրականացվել են վարչական շրջանների կողմից, խորը էտի են ենթարկվել շուրջ 2000 հատ թեղիներ: Մնացած ծառատեսակները, եթե էտվել են, ապա միայն չոր ճյուղերի հեռացման, անվտանգության ապահովման, սանիտարական նպատակներով:
- Ծառերի բուժման համար կիրառվում են՝ «Կարատե», «Ցիպերմաքսի», «Դիագինոն» և այլ թույլատրելի պեստիցիդներ, սակայն վերջին 3 տարիների

ընթացքում թեղու տերևակերի վարակի մասսայական բռնկումների ժամանակ  
նշված պայքարն արդյունավետ չի եղել:

- Ինչ վերաբերվում է ետված ծառերի ճյուղերն անապահով ընտանիքներին հատկացնելուն, խնդրում ենք դիմել Երևան քաղաքի 12 վարչական շրջաններ, քանի որ ծառերի էտումները և ընտանիքների ընտրությունն իրականացվում են վարչական շրջանների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը, խնդրում ենք այսուհետ հանրությանն իրազեկել նաև Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվող բնապահպանական միջոցառումների, ծառատուների և շաբաթօրյակների մասին՝ հանրության մասնակցությունն առավել մեծացնելու նպատակով:

Աշխատակազմի բնապահպանության  
վարչության պետ՝ 

Ա. Մարտիրոսյան

Ա. Մարսապետյան  
514-188  
Դ. Գրիգորյան  
514-263

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՒՄ ՃԱՌԵՐԻ ԵՐԻՑԱՍՄՐԴԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երեան քաղաքի բնակչության կյանքում մեծ նշանակություն ունեն կանաչ տնկարկները, որոնք բնակավայրերի անբաժանելի մասն են կազմում:

Մեր քաղաքի պողոտաներում և փողոցներում հատկապես Մաշտոցի, Խաչկառի, Կոմիտասի, Լենինգրադյանի, Աբովյանի, Վարդանանցի, Հանրապետության, Դ.Փարբեցու, Արշակունյաց, Տ.Մեծի, Երեբունի, Պուշկինի, Թումանյանի, Սայաթ-Նովայի, Ազատության, Խանջյանի, Տերյանի, Ամիրյանի և այլն տնկված ծառերի հասակը մեծ է 30-ից իսկ մի շաբթ փողոցներում այն անցնում է 50-ից:

Ժառերի մեծ տարիքը առաջ է բերել բնի և սաղարթի զգալի չափի մեծությանը, որի պատճառով համախակի ուժեղ քամիներից ծառերը շուրջ են գալիս, կամ ջարդվում հաստ մյուղերը, վնաս պատճառելով հետիոտն անցմանը և երթևեկությանը: Փողոցներում տնկված Թեղին, Մոսին, Հացենին, Աղնին, Թղկին շատ բարձրանալով ստվեր են զցում բնակարանների պատռնաններին և շատ դեպքերում էլ ցածրահարկ շենքերու տանիքներն են վնասում, ուստի արդարացի բողոքներ են ստացվում բնակիչներից:

Վերնշված համախակի հանդիսացող անցանկալի երևույթները կանխելու, ինչպես նաև կանաչ տնկարկների կյանքը երկարացնելու գեղեցիկ և դեկորատիվ տեսքը ապահովելու համար մեծ նշանակություն ունեն ծառերի երիտասարդացման և ձևավորման աշխատանքները:

Ժառերի և թփերի խնամքի կարևոր եղանակներից է խոր էտը/երիտասարդացում/: Այն կատարվում է ծառաբույսերի ողջ կյանքի ընթացքում: Երիտասարդ հասակում էտը նպատակառուղղված է հիմնականում պսակի ստեղծմանը, նրա պահպանմանը ու պաշտպանությանը, ծեր հասակում բույսերի երիտասարդացմանը: Ծեր հասակում շատ ծառեր, չնայած բավարար խնամքին, կորցնում են իրենց արժեքավոր դեկորատիվ հատկությունները, դրանց տերևները մանրանում են ու խունանում, աֆը դանդաղում է: Քաղաքային պայմաններում ծառատեսակներն ավելի վաղ են ծերանում և մահանում, քանական պայմաններում:

Փորձով հաստատված է, որ խորը էտով կարելի է խթանել ժամանակից շուրջ ծերացած և մահացման փուլում գտնվող ծառերի կենսունակությունը՝ ծառերը երիտասարդացնելով, որոշ դեպքերում 2/3-ով ակտիվանում է պսակի մակերևույթի շիկերի աճը, մեծանում են տերևներն չափերը և շատ շուրջ ժամանակահատվածում հանգամ առաջին տարվա ընթացքում/ մրսությունը զգայի չափով ավելանում է թթվածնով, ստեղծելով բարենպատմիկութիմա:


Նոր էտի շնորհիվ սաղարթի ներսում բարձրանում է օղաթափանցելի-ությունը և լուսաթափանցելիությունը, բարելավվում է ջրամատակարարումը, որը և նպաստում է ծառերի նորմալ ամին և զարգացմանը:

Ծառերի երիտասարդացումը պետք է կատարել մինչև նոր շիկերի աճման սահմանը: Կտրվածքը արվում է այդ շիկերի աճման տեղի վրա ծառաբնին շատ մոտ: Եթե կտրվածքը որոշ չափով վերև է, ապա բնափայ տի թրղած մասը կարող է չորանալ:

Երիտասարդացման ժամանակ անհրաժեշտ է ծառի սաղարթը իջեցնել թող-նելով 2-4 թև, հակառակ դեպքում ծառը ուժեղ աճ է տալիս և շատ կարծ ժամանակում նորից մեծ սաղարթ է ունենում:



, Դեկտրիվ այգեգործություն,, գրքից հեղինակ Վ.Վակուլենկո և ուրենական 1984թ./ ստորև բերվում է Կաղ-նու ծառի երիտասարդացման շնորհիվ բնի բարձրության և թողած մյուլերի օրինակը:



Երկանի Քաղաքապետարանի Կանաչա-պատման ձեռնարկության կողմից նախորդ տարիների կատարած բազմաթիվ ծառերի երիտասարդացման աշխատանքների փորձը՝ Մաշտոցի պողոտա -Առսի հսակովի պողոտա -Ապահի Խորենացի -Թղկի Վարդանանց -Հացենի

Թումանյան, Կոմիտաս, Ե.Թաղեռու-	
յան, Հալաբյան	-Թեղի
Տ.Մեծ, Գայի	-Առսի
Էրեբունի	-Ապահի

և այլն, թույլ են տալիս ասելու և ապացուցելու, որ Աքովյան և Հանրապետության փողոցներում գոյություն ունեցող ծառատեսակները ենթակա են ոչ հաճախակի երիտասարդացման /վեր-նշված մտահոգություն առաջացրած երկու փողոցների ծառերը իրենց կյանքում առաջին անգամ են երիտասարդացվու- ի վերջու երիտասարդացումը /որը շատ դեպքերում սխալմամբ մեկնա- րանվում է որպես „հատում,,/ որպես ազրոտեխնիկական միջոցառում մե- նշանակություն ունի ծառերի նորմալ ամի և զարգացման համար, ուստի համապատասխան բավարար ֆինանսական պայմաններում հարկ ենք համարում

Նկ. 9. Կաղնի. վերենում՝

Էտերուց անմիջապես հետո, ներքեամ՝ մի քանի տարի հետո:

ի վերջու երիտասարդացումը /որը շատ դեպքերում սխալմամբ մեկնա- րանվում է որպես „հատում,,/ որպես ազրոտեխնիկական միջոցառում մե- նշանակություն ունի ծառերի նորմալ ամի և զարգացման համար, ուստի համապատասխան բավարար ֆինանսական պայմաններում հարկ ենք համարում

Երևան քաղաքում շարունակել այդ կարևոր աշխատանքների կազմակերպումը:

**ԱՐԱՋԱՎԱՏՈՒՄ**, ՊՓԲԸ ՏԱՐԵՆ

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱՑՈՒ

Ա. ՄԵՐՄԻՒՅԱՆ

ԳՐԱՎՈՐ ԴԱՆԴՐՈՂՈԳ՝

ԳՅՈՒՂ. ԳԻՏ. ԹԵԿՆԱՑՈՒ

*M. Superior*

Ա.ՄԱՐՍԱՆԵԱՆ

ΦΙΛΙΣΤΟΡΕΥ

Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԲՈՒԺԱԵՐԻ ՊԱՏՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱԽ

१८४

Հ. Ահարոնյան

### **,,ԿԵՆՏՐՈՆ,, ԿԱՍՏԱՎԱՏՄԱՆ**

Տարածական գիտություն

#### Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

"Синтаксис" ПФС получает проверку *John* *Уильямса* 3.  
2009 г. № 1.

D. Pleyben sente off  
Received in the name of  
D. Z. and S. H. D. G. Pleyben  
Brought by Mr. T. C. of Government of  
to the appropriate authority for consideration (Plyben H. Z.)

33. Projekt zur gesamten

Guaranteed by my signature

2 P. 12<sup>th</sup> May

Из съезда, на котором состоялся вопрос о  
всегда открытой конференции: членов РСДРП(б).

9.9.1988, 5 Aug. 1988, 15.9.1988

